ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 940 - Ա

ԿԱՄԻԼԼԻԱՆՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ «Ս. ԿԱՄԻԼԼՈ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել Կամիլլիանների միաբանության «Ս. Կամիլլո» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,891,100,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Առողջապահական և սոցիալական աջակցություն» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Կամիլլիանների միաբանության «Ս. Կամիլլո» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 05806438) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի փետրվարի 23-ին կնքված N 704643082 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ջրամատակարարման և

ջրահեռացման ծառայությունների մատուցում 6,700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2018 թվականի նոյեմբերի 1-ին կնքված N 02508134308 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում 32,600,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2019 թվականին կնքված պայմանագրում (քարտի համար 6250012) նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում 7,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2018 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված պայմանագրում (քարտի համար 7250012) նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում 33,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության («Ղ-Տելեկոմ» ՓԲԸ) հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2007 թվականի հունիսի 28-ին կնքված N 10223201 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում շարժական կապի ծառայությունների մատուցում 5,400,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության («ԱրմենՏել» ՓԲԸ) հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2007 թվականի հունվարի 1-ին կնքված N 112848821 S9300093 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվա-

կանի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում 1,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության («ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ) հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2018 թվականի փետրվարի 20-ին կնքված N 112740687 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում 500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության («ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ) հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2020 թվականի հուլիսի 17-ին կնքված N 121391733 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ինտերնետի ծառայությունների մատուցում 250,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության («ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ) հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2020 թվականի հուլիսի 30-ին կնքված N 121407394 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ինտերնետի ծառայությունների մատուցում 250,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Երևան-Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02703411) 2024 թվականի նոյեմբերի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների մատուցում 2,400,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Կամիլլիանների միաբանության «Ս. Կամիլլո» բարեգործական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը Հայաստանի

Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

30.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ